ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

12.08.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Գ.Քարհանյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Հակոբյանը, Ա.Թումանյանը, Կ.Ադամյանը, Ա.Բաղդասարյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Բեջանյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից 05.08.2024-12.08.2024 ժամանակահատվածում ՀՀ Վարչապետի աշխատակազմից և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված հանձնարարականների կատարման և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:
(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված տեղեկանքի քննարկման մասին:

3. Այլ հարցեր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանը և Հ.Ավետիսյանը, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ղեկավարները ներկայացրեցին տեղեկատվություն 05.08.2024-12.08.2024 թթ. ժամանակահատվածում ՀՀ Վարչապետի աշխատակազմից ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված հանձնարարականների կատարման և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ.Քարհանյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություն Լոռու մարզային «Բերքի Տոն» միջոցառման կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ըստ պատկանելության մանրամասն ուսումնասիրել Պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ կազմած և ներկայացված տեղեկանքը, սահմանված ժամկետներում ու կարգով ներկայացնել պարզաբանումներ, առարկություններ կամ առաջարկություններ տեղեկանքում նշված կամ արձանագրված թերությունների, խախտումների և այլ բացթողումների վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Բաղդասարյանին՝

ՈՒսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր և Վիետնամի Հանրապետության Դանանգ քաղաքների միջև համագործակցության ծրագրի և հուշագրի ստորագրման վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99